

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 42/1

3 սեպտեմբերի 2013 թ.

Քննարկվեց «Ֆարմացիա» ՓԲԸ 19.07.2013 թ-ի դիմում-գանգատը «ԿԱ ՊԵԿ Մաշտոցի ՀՏ 09.07.2013 թ-ի թիվ 2123481 ստուգման ակտի դեմ:

«Ֆարմացիա» ՓԲԸ դիմում-գանգատում մասնավորապես նշված է.

2013 թ-ի հունիսի 13-ին «ԿԱ ՊԵԿ Մաշտոցի հարկային տեսչության գլխավոր հարկային տեսուչ Մարատ Փիլոյանի և հարկային տեսուչ Ռաֆայել Պապյանի կողմից համաձայն թիվ 2212268 հանձնարարագրի «Ֆարմացիա» ՓԲԸ Մարգարյան 22/2 հասցեում գործող դեղատանը կատարվել է ՀԴՄ շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն, որի հիման վրա կազմվել է թիվ 2212268 արձանագրությունը: Վերջինիս հիման վրա կազմվել են թիվ 2123481 ակտի նախագիծը, այնուհետև՝ թիվ 2123481 ակտը:

Հայտնում եմ, որ թիվ 2212268 արձանագրության մեջ նկարագրված հսկիչ գնման արդյունքները բացարձակապես չեն համապատասխանում իրականությանը: Այդ մասին հայտնվել է Մաշտոցի ՀՏ 24.06.2013 թ-ին մուտքագրված առարկություններում, սակայն այն մնացել է անպատասխան:

Ընկերությունը խնդրում է բացահայտել ճշմարտությունը և անվավեր ճանաչել թիվ 2123481 ակտը:

«ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով «Ֆարմացիա» ՓԲԸ տնօրենի և ստուգման ակտը կազմած պաշտոնատար անձանց ներկայացրած փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ դիմում-գանգատը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

Համաձայն «ԿԱ ՊԵԿ Մաշտոցի ՀՏ պետի 16.05.2013 թ-ի թիվ 2212268 հանձնարարագրի «Ֆարմացիա» ՓԲԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում): Արդյունքում կազմվել է հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ 13.06.2013 թ-ի թիվ 2212268 արձանագրությունը (այսուհետ նաև արձանագրություն), որում մասնավորապես նշված է.

Մաշտոցի ՀՏ գլխավոր հարկային տեսուչ Մարատ Փիլոյանի կողմից 13.06.2013 թ-ին ժամը 12:18-ին ք.Երևան, Մարգարյան 22/2 հասցեում գտնվող դեղատնից կատարվեց հսկիչ գնում 50 դրամի չափով /սանտավիկ 50 դրամ արժողությամբ/, որի դիմաց վճարումը կատարվեց կանխիկ դրամով: Վաճառողուհի Ռուզան Աբրահամյանը գումարը չմուտքագրեց ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրեց: Ուսումնասիրությունն իրականացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվեցին ծառայողական վկայականները և ուսումնասիրության հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետև, ժամը 12:20-ին ՀԴՄ-ից դուրս բերվեց Z հաշվետվություն՝ 45040 դրամ ընդհանուր գումարով, որում ներառվախ չէր կատարված վճարման արժեքը: Z հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը՝ 50 դրամը, ժամը 12:21-ին մուտքագրվեց ՀԴՄ, դուրս բերվեց կտրոն և ժամը 12:21-ին նորից դուրս բերվեց Z հաշվետվությունը 50 դրամ ընդհանուր գումարով:

Գնված ապրանքը ուսումնասիրությունն իրականացնող հարկային ծառայողների կողմից ետ վերադարձվեց տնտեսվարողին և ետ ստացվեց հսկիչ գնման գումարը, որից հետո տպվեց վերադարձի կտրոն կատարված վճարման արժեքի չափով:

Ուսումնասիրությամբ պարզվեց, որ տնտեսավարող սուբյեկտի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջները, որն առաջացնում է պատասխանատվություն ՀՀ սկիզ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Հաշվի առնելով վերոգրյալը ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաշտոցի ՀՏ պետի կողմից 19.06.2013 թ-ին հրապարակվել է թիվ 2123481 հանձնարարագիրը, որի համաձայն ընկերությունում իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաշտոցի ՀՏ 09.07.2013 թ-ի թիվ 2123481 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված ստուգանքը՝ գումարով 150.000 դրամ:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 27.11.2003 թ-ի թիվ 1561-Ն որոշմամբ հաստատված կարգի 6.1 կետի դրույթներով ուսումնասիրությունն իրականացնող անձինք վերադարձրել են հսկիչ գնմամբ ձեռք բերված ապրանքները, ետ են ստացել հսկիչ գնման գումարը, որից հետո կատարված վճարման արժեքի չափով տպվել է վերադարձի կտրոն: Հսկիչ գնմամբ ձեռք բերված ապրանքները ետ վերադարձնելու վերաբերյալ կազմվել է համապատասխան արձանագրություն:

Հանձնաժողովը գտնում է, որ վերոգրյալ փաստական հանգամանքները հիմնավորում են ընկերության կողմից ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջները խախտելու հանգամանքը, որն իր հերթին առաջացնում է պատասխանատվություն «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով:

Հանձնաժողովի 12.08.2013 թ-ի նիստի քննարկման արդյունքում սույն գործի վերաբերյալ ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն ստուգման ակտը թողնվել է անփոփոխ:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի «Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին» N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, սույն գործի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ընդունված որոշման նախագիծը, դիմում-գանգատը և գանգատին առնչվող նյութերը (գանգատի փաթեթը) ուղարկվել են վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ: Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո ր ո շ ու մ է՝

Ստուգման ակտը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ